ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹ

ՄԻԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԴՈՒՔՐ ԱԶԳԻՆ

№ 1 ՅՈՒՆՈՒԱՐ № 1

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Բժշկականութիւնը գործադրվաւմ է նաև վաղը նի ապրելի մէջ. իսկ առաջապահպանվելու ապրելու մեն ժիսայն չուսանելու ապրելը

ԵՐԵՎԱՆ

ԷՄԻՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

1882

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I Գերեզմանները քաղաքի մէջ 3
II Դեֆտերքոսի բժշկելը 10
III Հոգատարութիւն նորածին երեխի մասին. 12
IV Բարեկոյաս (Ֆոտիլեա) 17
V Նամակ խմբագրին (Մոսկվայից) 22
VI Խառն լուրեր 25
VII Յայտարարութիւններ 30
VIII Օգի բարեխառնութիւնը Երևանում Գաւնվար ամսին 1882 թ.
Իէօմիւրի ջերմաչափով 32

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹ

ՄԻ ԱՄՍԱՅ ՀԱՆԳԷՍ

(1—2 ՏՊԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ)

Հրատարակվում է Երևանում աշխատակցութիւնամբ ազ. պ. բժիշկների Արամի Իսմենիշ Յովհաննիսեան, Աւետիք Բաբայեան, Գէորգ Տէր—Գիւրգեան, Մարտիրոս Թալանթարեան, Արմենակ Շահազիզեան, Գէորգ Քոչարեան, Բազրատ Նուռատունդեան և. հեռաւոր Ծրագրով.

I Պետական կարգադրութիւններ ժողովրդի առողջութեան վերաբերութեամբ.

II Առողջապահական յոդուածներ աշխարհիկ ոճով. ժողովրդի առողջապահական պայմանները. բժշկական տեղեակներ ժողովրդի մէջ. բժշկականութիւնը ժողովրդականացած.

III Բժշկական մատենախօսութիւն.

IV Խառն լուրեր. Յայտարարութիւններ.

Տարեկան գինն է ԵՐԵՔ մանէթ կանխիկ վճարելի. Յաստագրուել կարելի է խմբագրատանը. օտար քաղաքացիք դիմում են հեռաւոր հասցեով. Ին տար Դրուան. Ին редакцію журнала „ГИГІЕНИЧЕСКІЙ ЛИСТОКЪ“.

ԽՄԲԱԳԻՐ ՊՐԱՏՈՐԱԿԸ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓԱՂԱՔԱՅԻՆ ԲԻԹԵԿ

ԱՆԻՄՆ ՏՊԳՐԱՆՅԱՆՑ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹ

ՄԻԱՄՍԵԱՑ ՀԱՆԴԷՍ

ՆՈՒԷՐ ԱԶԳԻՆ

№ 1 **ՅՈՒՆՈՒԱՐ** **№ 1**

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Թերթականությունը գործածվում է նաև վարի նի ազգերի մէջ. իսկ առողջապահությունն ազգատ մեն միայն լուսաւորեալ ազգերը։

ԵՐԵՒԱՆ

ԷՋՄԻԱԾԻՆ ՏԻՊ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

1882

Типографія Эмина Теръ-Григоріанцъ. Въ г. Эривани
На углу Астафьевской и Бебутовской улицъ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹ

ՍԱՀՄԱՆԱՅ ՀԱՆԳԷՍ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 1 ՓԱՐԶԱՄԻՍ 1882

ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ ՀԱԼՅԱՐԻ ՄԵՋ

Ուրբանչիւր հասարակութիւն աշխատում է հեռացնել իր քաղաքից բոլոր այն բանները, որոնք փտելով, աղտակալում են օդը դարշահոտութիւնով, որ կարող է վնասակար լինել մարդկային կենդանիներին։ Կան անկիրթ հասարակութիւններ, որոնք մի քանի դարշահոտութիւններ կամ վնասակար չեն համարում, կամ իրենց անապրբերութեան պատճառով, չեն աշխատում հեռացնել քաղաքից դարշահոտութիւնները և այդպիսի բազմաթիւ մշտական պատժվում են կանխաբար հիւանդութիւններով ու կանխիկ մահով։

Հասարակութիւնները գիտե՞ն արդեօք, թէ ի՞նչ է գերեզմանատունը։ Այո, գիտեն, բայց միևնոյն ժամանակ չը գիտեն։ Գերեզմանատունն է մի ահագին շտեմարան փտած ու փտող մարմինների, որ սարսափելի տեղ է իւրաքանչիւր մարդի համար, բայց մանաւանդ քաղաքացու համար, ոչ այն պատճառով, որ մի անգամ իւրաքանչիւրին պէտք է դընեն այդ գերեզմանատան հողի տակ, այլ այն պատճառով, որ նա ապրում է փըտող մարմինների շտեմարանի մօտ։

Հատերը կասեն թէ, մենք հեռու ենք գերեզմանատներից, բայց ես կասեմ, որ մեր հասարակութիւնները շատ մօտ են ապրում այդ գարշահոտութեան շտեմարանից։

Մտէք իւրաքանչիւր եկեղեցու բակ, նայէք ձեր չորս կողմը ու կը տեսնէք, որ բակը դարձրած է գերեզմանատուն, բայց պէտքէ լինէր պարտէզ դարաւոր ծառերի և անուշահոտ ծաղիկների, ինչպէս սրբութեան տեղ, ինչպէս հանգստութեան և աղօթքի տեղ ամենայն անցնողի համար։

Մտէք եկեղեցի և որ տեղ էլ որ դուք կայնէք, կայնած կը լինէք գերեզմանաքարի վրա, որի տակ պարկած են փտած մարմնի ոսկորները կամ դիակ, որ գեռ շարունակում է փտել։

Ո՞ւմ չի պատահել մտնել մի քանի եկեղեցի և զգալ մեռելահոտ։ Հատերիս է պատահել, այդ մենք գիտենք։

Ի՞նչ է պատճառը, որ եկեղեցիների բակերում նաև եկեղեցիների մէջ թաղում են հանգուցեալներին։

Այսց մէջ ընդունուած

է, որ իւրաքանչիւր մեծատուն կամ հարուստ մարդ իրեն փառք ու պատիւ է համարում, երբ իր սիրելին թաղել է տալիս եկեղեցու բակում կամ եկեղեցու մէջ։ Նա չէ խնայում փող, որով նա առնում է գերեզմանի տեղը, իսկ հասարակութիւնը, համարելով նրա այդ գործը բարեգործութիւն և աստուածպաշտութիւն, գովում է նրան, որովհետև նա նուիրում է եկեղեցուն մի որև է դրամար գերեզմանատեղի անունով։

Հասարակութիւնը իր գովասանքով, աստուածպաշտութեան զգացմունքով, թոյլ է տալիս մի որև է մեծատունին կշտացնել իր փառասիրութիւնը, և պատրաստում է իր քաղաքի մէջ, իր քաղաքամասում, այն եկեղեցում, որ տեղ նա ինքն ամեն օր պէտք լինի և աղօթէ. կրկնում եմ, պատրաստում է շտեմարան հոտող և փտող մարմինների։ Դագաղի վրա երկու արշին հող ածելով, կարծում են, որ նրա հոտը չի բարձրանայ եկեղեցու մէջ, այն ինչ եկեղեցում կայնած ժողովուրդը ներշնչում է դիակի գարշահոտութիւնը։ Միևնոյնը կարելի է ասել և այն դիակների համար, որ թաղած են եկեղեցու բակում։

Եկեղեցու մէջ կամ բակում դիակ թաղել. նշանակում է ապականել քաղաքի օդը և դեռևս։

Ամենասարսափելին այն է. որ եկեղեցու մէջ կամ բակում թաղում են երբեմն (որովհետև մեծատուն է կամ հարուստ է) այնպիսի հիւանդութիւնից մեռած մարդերի դիակներ, որոնք մեռել են վարակիչ հիւանդութիւններով. ո օ խօլէ-

նայ Սուրբ Սարգիս եկեղեցու քաղաքում, եկեղեցու պատի տակ, որտեղ նա եպիսկոպոս էր, որտեղ նա քարձրաստիճան մարդ էր, կարծես թե ժողովուրդը պարտաւոր է ներշնչել նրա դիակի պարշտամութիւնը, նմանապէս Նրանց թեմական դպրոցի հարիւրաւոր աշակերտները, որոնք այդ եկեղեցու քարիւմ մշտական խաղում են դասերից յետոյ մաքուր օդ ներշնչելու համար։

Հոգեւոր և քաղաքական կառաւարութիւնների ուշադրութիւնը առանձին կերպով դարձնում եմ այդ հարցի վրայ։ Արանք պարտաւոր են հոգալ ժողովրդի առողջութեան վրայ և ոչ թե հիւանդութիւններ տարածեն ժողովրդի մէջ, այդ պատճառով էլ պէտք խիստ արգելեն թաղել դիակներ քաղաքների կամ

ներից, որոնց դիակներից և սրանց նման հիւանդութիւններից կասկած չէ կայ որ այդ կերպով պահպանում են քաղաքի մէջ այդ վարակիչ և անկասկած կոլտատներ հիւանդութիւնների սերմերը։ Սարեպաշտ քրիստոնեաները դայլս են լինում ամբողջ ընտանիքով եկեղեցին աղօթելու և վարակուած չնում են տուն, որովհետև եկեղեցին կամ բազը լցրած է այդ հիւանդութիւնների սերմերով, որոնք լողում են օդի մէջ և որա հետ ներշնչում են։ Մեզ կարծիք, որ միայն հին ժամանակներում էին թաղում եկեղեցիների և սրանց բազերի մէջ, դիակներ միայն ունում են և մեր ժամանակներում և մանաւանդ գիւղերում։ Ինչպէս տարի թաղեցին Աբոմելիքեան եպիսկոպոսի դիակը Նրանց

գիւղերի եկեղեցիների բաղ-
լում և մանաւանդ եկեղե-
ցիների մէջ։

Սասարակութիւնը հր-
կէք չը սիրաք թող ոչ,
որ իրենց եկեղեցու մէջ կամ
բաղում թաղին մի որ և է
դիակ։ Այսպիսի դէպքե-
րում անտարբեր մնալն, այն
հեռաւոր չը կ'ունենայ, որ
կը տարածուեն սարսափելի
վարակիչ հիւանդութիւններ,
որոնց առաջն չի կարելի
առնել տարիներ շարունակ
և ժողովուրդը կ'ենթարկուի
մեծ դժբարեկութեան։

Կան քաղաքներ, որոնց
հանգստարանները կապած են
քաղաքին, մի քանիսը նաև
շրջապատուած են անտառով,
որտեղ մարդիք են ապ-
րում։ Այդ հանգստարան-
ները շինած են երբեմն
քաղաքի այն կողմում, որ
տեղից միտական քամի է
գալիս. երբեմն այդ զերեզ-
մանատների մօտերքում ա-
ռու կայ, որ քաղաքին է
անցնում և կասկած չը կայ
որ քաղաքացիք այդ առուի
ջուրը գործ են ածում։

Իւրաքանչիւր զերեզման-
ատան դրա պէտք է կայել
ընդարձակ դիակների մի ա-
ռանձին շտեմարանի, որ տեղ
մարմինները շատ կամաց
փտում և լուծվում են։

Դիակների լուծուած չը-
բին և օդաձև մասերը, ա-
ռանց վարակիչ և կորստարեր
ազդեցութիւն ունենալու կամ
կաղմուածքի վրա, ծծվում
մնում են զերեզմանատան
գետնի մէջ և ապականում
հողը։ Գետնաջուրը, որ ա-
մեն տեղ կայ որոշ քանա-
կութեամբ, կայ նմանապէս
և զերեզմանատան հողում։
Այդ գետնաջուրն հաղոր-
դակցութիւն ունի բոլոր
մօտակայ ջրերի հետ։ Ի-
րենանոյ Կոլեռ զերեզման-
ատունը, քաղաքին կապած է
և գտնվում է քաղաքից

բարձր։ Այդ գերեզմանատան վրով անցնում է Սեւանայ ծովի և միւս կողմերի մաքուր օդը և դասլիս է Երևան։ Այդ որ, այդ օդն անցնելով գերեզմանատան վրով, բերում է դէպի քաղաք այդ գերեզմանատան օդը, որ մենք քաղաքում ապրելով, ակամայ ներշնչում ենք։ Մամուռի ջուրն անցում է Կողեռ գերեզմանատան մոտով, իսկ քաղաքում գործ են ածում իբրև մաքուր ջուր։ Ես գիտեմ մէկ աղբիւր այդ գերեզմանատան մոտ Զանդուի տիրին, որի ջուրը նոսև անասունները չեն խմում, բայց պէտք է ասեմ, որ այդ աղբիւրն բաւականին հեռու է գերեզմանատանից, այնուամենայնիւ գերեզմանատան նիւթերը կարողանում են անցնել գետնաջրի միջոցով և խառնուել այդ աղբիւրի ջրի հետ, հետևաբար այդ նիւթերը գետնաջրի հետ պէտք է խառնուեն և մեր քաղաքի գետնաջրի հետ և ապականեն այն օդը, որ մենք ներշնչում ենք։ Ուրեմն քամին և գետնաջուրը բերում են դէպի մեր քաղաքը Կողեռ գերեզմանատան ապականիչ և վարակիչ նիւթերը։ Ասածիցս հասկանալի է, որ այդ գերեզմանատունը մեծ վնասներ է բերում ժողովրդի առողջութեանը և պէտք է փակուի, այսինքն այլևս թոյլ չը տան Կողեռում հանգուցեալներ թաղել։ Հասերը կ'ասեն, եթէ այդ գերեզմանատունը փակենք, ապա ո՞ր տեղ թաղենք մեր հանգուցեալներին։

Երևանայ համար ամենալաւ և յարմար գերեզմանատան տեղն այն դաշտն է, որ գտնվում է Աղեսխուշի Ճանապարհից ձախ կողմ (եթէ քաղաքից դուրս գնաք)։

Հարմարութիւնը կայանում է նրանում, որ այդ դաշտը բնակութեան տեղից բաւականին հեռու է, քաղաքի տափից ցած է, իսկ մի լեռնաշղթայ բաժանում է այդ դաշտի օդը քաղաքի օդից, և քամին այդ դաշտի օդը չէ կարող բերել դէպի քաղաք։ Հասերը կ'ասեն, թէ այն ժամանակ մեր գերեզմանոցներն հեռու կը լինեն քաղաքից։ Այդ ուղիղ է, բայց այդպէս էլ պէտք լինի, որովհետև այն՝ ինչ ապականում է օդը և ջուրը պէտք հեռու լինի մարդկային բնակութեան տեղից։ Ղորգայ գերեզմանատան տեղն շատ վատ է ընտրած, որովհետև գտնվում է Գեստառին շատ մօտ և փոքր ինչ բարձր տեղում։ Կասկած չը կայ, որ այդ գերեզմանատան նիւթերն ապականում են Գեստառի ջուրը, որ քաղաքացիք գործածում են ինչպէս մաքուր ջուր։ Այդ գերեզմանատունը պէտք տեղափոխէին դէպի Ղորգայ հիւսիս արևելեան կողմերը։

Սարսափելի են Երևանցւոց համար թուրքաց գերեզմանատները, որովհետև դրանք ուելի մօտ են բնակութեան տեղերին (շիլաչիների մահլին համարեայ կպած են) և մանաւանդ վտանգաւոր է նրանց թաղելու ձևը։ Թուրքերը հող չեն ածում դիակի վրայ, այլ գերեզմանը ծածկում են փայտերով, կամ սալ քարերով, ածելով այդ քարերի կամ փայտերի վրայ՝ որշին հող և թողնելով արձակ տեղ դիակի շորս կողմը, որպէս զի հանգուցեալը կարողանայ նստել երբ խօսելու լինի Գաբրիէլ հրեշտակապետի հետ։ Ի

հարկէ թուրքաց գերեզմանատունը պէտք է տարածի իր չորս կողմը ամենատարածափել դարշահոտութիւն և դառնայ աղբիւր ամենայն կէրպ հիւանդութիւնների։

Այս հարցերի վրա խոսողս, մի քանիսն ինձ ասել են. պ. բժիշկ, այդքան մանր մունր հարցերի յեռեվից ընկնելն լաւ չէ, բայց այդ պարոնները մոռանում են, որ ամենայն մեծ բան կայացած է մանր բաներից կամ մասերից։ Այդ մեծ բանը կարդի բերելն կարելի է միայն այն ժամանակ, երբ կարդի բերենք այդ մեծ բանի մասերը մի առ մի, այն ժամանակ բանը ամբողջապէս կարդի ընկած կը լինի։

Գերեզմանատան հարցն ամենակարևոր հարցերից մէկն է մեր մարմինն առողջ պահպանելու համար, այդ պատճառով առողջարկում եմ իւրաքանչիւր հասարակութեանը քննելու և հարկաւոր կարգադրութիւնը անելու, եթէ ցանկանում են իրենց առողջութիւնը պահպանել։

Լ. Տ.

ԴԻՖՏԵՐԻՏԻ ԲԺՇԿԵԼԸ.

(Вѣстникъ краснаго креста 1881 թ. № 21).

Պիֆտերիտով հիւանդին, հարկաւոր է պահել մի առանձին, ընդարձակ և լոյս սենեակում և պէտք չերկբայել, որ հիւանդի հոտաբ առաջին գեղը մաքուր ու զով օդն է, հակառակ դէպքում բիի բորբոքումը այնչափ կըտասկանայ, որ մի ժամուայ մէջ կարող է խեղդել երեխային։ Բուկը ցաւելուս չը պէտք տալ բան խմել, այլ հարկաւորէ տալ ոչ շատ սառը, բայց մաքուր ջուր, հոփացրած թէյ կամ թթուաշ խմելիք-կիտրոնով (լիմոնով) և շաքարով։ Զրա-

լի կերակուր պէտք տալ — կաթ, հորթի կամ հաւի մսաջուր, թերխաշ ձու։ Ուտելու ժամանակ կորելի է տալ ջրախառն գինի։ Թէ ուտելուց առաջ և թէ ուտելուց յետոյ սնոպատաճառ պէտք ողողել բոլոր բերանը։ Կերակուրը ուտելուց յետոյ մի փոքր միջոց անցած՝ հիւանդը կարոյէ դեղ ընդունել։

Դիֆտերիտի պատաքին բժշկութիւնը պէտք սիսկ բոլոր բերանի պատերը կորմրում և ուռչումն, և սպիտակ բշտիկներ դէռ չեն երևում, պէտք բոլորը ողողել բերանալեան ազի կամ բենզոյնա թթուուտի նատրոնի ջրով։ Թէ մէկից և թէ միւսից մի թէյի գոտալ մի բաժակ ջրին խառնուելով։ Եթէ հիւանդ երեխան չի կարողանում բոլորն ողողել, հարկաւորէ վերևում նշանակուած խառնուրդը փոքրիկ վրձինով քսել նրա բոլորին։ Բացի այդ իւրաքանչիւր երկու ժամից, յետոյ հիւանդ երեխան պէտք ընդունի նշանակուած խառնուրդը մէկ թէյի գդալ, իսկ հասակ առած մարդը սեղանի գդալ։

Ցաւի սկզբում ամենալաւ դեղերից մէկնէ այսպէս ասուած տաք փաթէթը (կամպրէս էշոֆան, սոդրէվարուշի կամպրէս) որոնք շինվում են այսպէս։ վեր առ դրեր։ Թղթի կէս թերթի մեծութեամբ մի ցնցոտի, ծալիր չորս կամ հինգ անգամ, նայելով մրի մեծութեանը, թրջի տաք ջրի մէջ, քամիր ու դիր հիւանդի վզի վրա։ — յետոյ ծածկիր դրան ցնցոտիից մեծ կտոր մամաշտրով (կլէօնկոյ) կամ իւղով թրջած և չորացրած թղթի կտորով։ Մամաշտրի վերևից դիր ֆլանելի կամ մի որ և իցէ բրդէ շորի կտոր, որն էլ իր կարդին պէտք աւելի մեծ լինի մամաշտրից, կամ թէ չէ հինց փաթաթիր վիզը բրդէ թուշինոսկով կամ ինկով։ Պահելով տաք փաթէթը վզի վրա երեք ժամուայ չափ, նորից թրջիր քամիր նրան, արա այնպէս, ինչպէս ասուած է վերում։

Երբ կոկորդի պատերը ծածկվում են սպիտակ բշտիկներով և այնպէս սաստիկ ուռչում են, որ հիւանդին խեղդուել են սպառնում, պէտք վիզը երկու կողմերից պատել սառցով լի շշերով կամ գործ դնել ամենասաստը փաթէթներ, բոլորին բերանալեան ազի խարնուրդ քսել աւելի յաճախ և առատ կրկնելով։

Բշտիկներով ծածկուած տեղերը քսելու համար ամենից լաւն է մէկ և կէս քլորական երկաթի խառնուրդ դործ դնելով (մի կամ երկու կաթ մի բաժակ ջրում)։ Բերանի պատերից բշտիկները ոչնչացնելու համար պէտք է գործ դնել կրաջուր կամ սոդի խառնուրդ։ Եթէ բշտիկները քիթում են յայտնվում փոքրիկ հողմով (ապրինցով կա) պէտք է քիթն էլ լուանալ նոյն խառնուրդներով, որոնք գործ են ածվում բերանը ողողելու համար։

Ներքին միջոցներով բժշկությունը սկսում է հենց առաջին նշանները երևալու։ Բողոքում բշխիկների այտուցելու ժամանակ տալիս են հիանդին ընդունելու, վերևը նշանակուած բերբերինան աղի կամ բենզոյնա նատրիումի խառնուրդը հիանալի ուժը գրգռելու և ամրացնելու համար, պետք է գործածել բենզոյնա-ժելի երկու անգամ։ Բոլորը (երեխաներին 2—3 կաթ, իսկ հասակաւորներին 5—10 խրատանչիւր ժամից յետոյ)։

Վերջացնելով ներկայումս Դուսաստանի նահանգներում այս տարափոխիկ հիւանդութեան մեր նկարագիրը անհրաժեշտ ենք համարում յաւելել մերել խերսոնի հոտարակական առողջութեան մասնաժողովի հոտատած հետևեալ ուղղադիր կանոնները. դիֆտերիտից մեռնողներին (չարադուշակ դոպոշ) XIII հ. 917 յոդուածի հիման վրա, անպատճառ պէտք մի օրուայ միջոցում թաղել դիֆտերիտի սասակիկ վարակիչ լինելու պատճառաւ։ Այս դեպքում պարտականն ա. չը փոխել ննջեցեալների շորերը. բ. դիակները չը լողացնել, գ. նկեղեցի չը տանել, դ. բաղի հողից ու մոլից ոչոքի թոյլ չը տալ վերջին հաղորդարանը, և թաղել ծածկուած դագաղներով, ե. ջանապարհ չը գցել դեպի գերեզմանատուն և է. հոգեկորոյթ (քիլիխ)ը բաց ընդհանրապէս արգելել ժողովրդին, որ մարդիք չը ժողովին միասին և չը թողնել երեխանները դիֆտերիտով մեռածի տեսնելու (Պրաւիտելստվենի վեստնիկ, № 161)։

ՏԻՐԻ ՆՈՒՆԻՑ ՄԵԼՍԱՆ

ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՆՈՐԱԾԻՆ ԵՐՆԽԻ ՄԱՍԻՆ

Երեխէն մօր արգանդում լինելու ժամանակ չունի շնչառութիւն ու չէ ընդունում կերակուր. նա մեծանում ու զօրանում է սնանելով իր մորից նիւթ ստանալով։ Դրը չունի ներգործութիւն նրա մարմնի վրայ, որովհետև նա շրջապատուած է ջրային հիւթով։ Ծնուելուց ու մորից բաժանուելուց յետոյ, իսկոյն պէտք է օդի հարկաւորութիւնը, շունչ է քաշում. շնչառութեան հարկաւորութիւնը պէտք է նա այն պատճառաւ, որ նա ծնուելուց յետոյ էլ չէ սնանում մորից մնացեալ և այդ ժամանակից նրա մէջ սկսում է մի նոր կեանք, նա սկսում է իր շնչառութիւնով ունենալ նոր, սեպհական յատկութիւն տրտաքին բնութեան հետ։ Օդի ջերմութիւնը շատ պակաս է լինում նրա մարմնի ջերմութիւնից ու փոփոխական, լոյսը

Ներգործում է նրա ոչ քերի վրայ, մարդից էլ չէ սառնում նիւթ ու շուտ զգում է ուտելու հարկաւորութիւն։ Նրա մարմինը և արիւնը սառնում են նոր ոճով։ Այդ նոր ու անսովոր փոխնական կեանքը անհասասա հանգամանքների մէջ լինելով, կարող է հիւանդութիւնը ստեղծել ու երբեմն խանգարել մարմնի գործարանները, մանաւանդ երբ օդը մաքուր չէ, երբ երեխէն զեշ դոլորշիներով է պատած։ Այդ, ինչպէս և ուրիշ պատճառներ, նմանապէս և լոյսի ներգործութիւնը, կարող են առաջացնել ոչ քի ցաւ, խանգարել մարսողութիւնը ու պատճառ դառնալ զանազան հիւանդութիւնների։

Զանազանութիւնների տեղի չունայ։ Համար, հարկաւոր է հոգալ սենեակի օդի ու տաքութեան մասին, որի մէջ պէտք է ծնայ երեխան ծընունդից յետոյ, նմանապէս նրա անկողնի, հագուստի, ուտելու և ուրիշ զանազան բաների վրա։

Երեխէն ծնունդից յետոյ, երբ դեռ պորտը չէ կտրած, գնում են նր ոտերի մէջ փորով նրա կողմը ուղղած, բայց այնպէս, որ պորտը ճզած չլինի ու գլուխը դրած լինի մի ոսի վրա, որպէս զի մոր արդանդից եկող ջուրն ու արիւնը չքմանեն երեխի քերանը ու քիթը։ բացի պորտից այսպիսի դրութիւնը թէ-թեւացնում է ջրի կամ խորխի վեր գալուն, որով երբեմն լցուած է լինում երեխի բերանը։

Ծնունդից յետոյ երեխէն խիստ բարձր ձայն է հանում, սկսում է խորը շունչ առնել, մի քանի րոպէից յետոյ պորտի արիւնը դադարում է, արեան շրջանը ու շնչառութիւնը շուտով դառնում է հաւասար ու զօրեղ, միայն այդպիսի յաջողակ ժամանակ կարելի է կտրել պորտը։ իսկ եթէ երեխէն ծնած է ուշացած, կամ թէ ձայն չէ հանում, շունչ չէ առնում, պէտք է առաջ կեանքի բերել նրան ու յետոյ կտրել պորտը։ Պորտը կտրել, կապել չի կարելի 5 կամ 10 րոպէից առաջ և ամենից լաւ կը լինի, որ սպասեն մինչև ի պորտի գարկը չընդդատի։ Սովորաբար քանում են պորտը երեխի փորից երեք կամ չորս մատանաչափ հեռու, բայց բամբակի զայրանով կապում են, ու երբ տեսնում են, որ արիւնը էլ չէ շարժվում, այդ կապից մի մատանաչափ հեռու կապում են, պորտի այն մասը, որ ընկնելքի կողմն է ընկնում։ Եթէ այս խորհուրդս ճիշտ կատարեն մորից և երեխից երբէք արիւնհոսութիւն չի պատահիլ։

Մեր մէջ սովորութիւն է երեխի վրա ծնունդից անմիջապէս յետոյ աղ անել և այդ դրութեան մէջ թողնել նրան մի քանի ժամ։ այդ սովորութիւնը ոչ միայն օգտակար չէ, այլ

և շատ ու շատ վնասակար է։ Սովորաբար կարծում են, որ աղն ազդելում է կաշվի հիւանդութիւնները առաջանալու, մանաւանդ խոցերոց այդ կարծիքը սիալ է. մենք տեսնում ենք, որ այդ սովորութիւնը միայն ասնջանք, նեղութիւն, նաև հիւանդութիւն է առաջացնում երեխի համար, որին բնութիւնը ստիպել է մեր ազգանդումը այնքան քիչ ուշութիւնով, որ նրա վրա նաև ծնուելուց յետոյ օրն ունի մեծ նեղդործութիւն. ո՞ւր մնաց այնպէս զօրեղ բանն, ինչպէս, աղն է։ Ամենից լաւն ու օգտաւէտն է, երեխէն ծընվելուց յետոյ խոյոյն լոլացնել ու փաթաթել տաք շորերի մէջ։ Լոլացնում են իատակ, տաք ջրում (25 աստիճանիւր.) ու լուանալիս փափուկ սպունգով (տամով) զգուշութեամբ ու հանդարտ սրբում են մարմնի վրից ծրագրի նման նիւթը։ Պէտք է զգուշանալ քերելուց, որովհետև այդ պիտով կարող է կաշին կարմրել ու երբեմն էլ խոցատուիլ ու ձեռ չլցալ ու շրջիլ պորտի վրա գրած կապը, որ բացուելիս կարող է նորոգել արեան հոսումը։ Լոլացնելուց յետոյ, պորտի կապը երկք կամ չորս մատնաչափ լայն կտաւով պնդացնում են փորի ձախ կողմը ու յետոյ հաղցրնում պատրաստած շորերը։

Նորածին երեխի համար յարմար են կաւէ շապիկ, լրդէ շորեր ու բամբակէ ծածկոց, որի մէջ պէտք է երեխին այնպէս փաթաթած, որ գլուխը հազիւ ծածկած լինի։ Աւելորդակ հոյոց բարուրելու կերպին, մանաւանդ անմիջապէս երեխի ծնուելուց յետոյ, չէ կարելի հաւանութիւն տալ, որովհետև երեխին շատ պինդ են փաթաթում. նրա ձեռները, փոխանակ արձակ թողնելու, այնպէս են կապում, որ չէ կարող շարժել, նմանապէս վատ է այն սովորութիւնը, որ երեխին, խոյոյն ծնուելուց յետոյ, կապում են օրորոցում և շատ շատ օրօրում, որովհետև այդ շշմացնում է երեխին և այնպէս սովորութիւն է գառնում նրա համար, որ առանց օրօրելու չէ կարողանում քնել. նաև սրիշ վնասակար հեռանքներ կարողեն առաջանալ երեխի ձեռները, ոտները և բոլոր մարմինը պինդ կապելու սովորութիւնից. որովհետև չկարողանալով ազատ շարժել երակների մէջ, հետաքրքրում է դրդռուում, լրցվում է ուղեղի երակների մէջ ու պատճառ է գառնում թմրութեան, քնի անհանգստութեան, շատ շատ դարթելու ու գանգատ հիւանդութիւնների։ Պինդ բարուրելը համարեայ թէ արդելում է շնչառութիւնը, չէ թողնում որ անդամները ազատ մեծանան ու զօրանան, նեղութիւն է տալիս մարմնի բոլոր գործարաններ-

լին՝ ատամոքին, լնապդին, թոքին, պոլին։ Փորը հուլի տալուց երեխէն փոխում է կաթը, կերածը չէ կարողանում մարսել, ապէքների տեսակ տեսակ հիւանդութիւններ է առաջանում։

Թէպէտ և մեր պարտուքի կապանները թոյլ կապելով կարելի է ազատել երեխին այդ վնասներից, բայց աւելի հեշտ ու յարմար կը համարուի եւրոպացոց կերպ պարտուքով, որովհետև նրանով կարելի է աւելի թէթև կապել ու արձակել և շուտ փոխել շորերը առանց նեղութիւն տալու երեխին։ Եւրոպացիք ատաջ հագցնում են կաւելից կամ բամբակից կարած շապիկ. այդ շապիկը պէտք է լինի օդի տաքութիւն համեմատ բարակ կամ հաստ ու կապուի քամակից, յետոյ լայն, երկու տակ, երեխայի մեծութեամբ կտաւով փաթաթում են մարմինը թեւերի տակից սկսած թոշնելով ձեռները արձակ. սրա վրայ փաթաթում են մի ուրիշ երկար ու լայնութիւնով չորս մատնաչափ կոտու, բայց միշտ թոյլ որ հարկաւոր ժամանակ հեշտ քանդուի ու կապուի։ Աւելի շուտ արձակելու համար կարելի է երեք տատանձին կապ շինել, մէկը կուրծքի, միւսը փորի, իսկ երրորդը, ծնկերի վրա։ Յետոյ ծածկոցով փաթաթում են երեխին, սկսած ուսերից, իսկ պլուխը ծածկում են բարակ կտաւով, բայց մազը դուրս պրծուց յետոյ գրլուխը թողնում են բաց, որ միշտ հով լինի, որովհետև տաք պահելը կարող է հիւանդութիւն առաջացնել։

Երեխին պարտուքելուց յետոյ պահում են նրան մեր անկողնումը կամ բաւական խոր օրօրոցում, որ շարժելիս չընկարոցանայ։ Մեր ընկնելը ի հարկէ երեխի տեղը պէտք է միշտ կակուղ ու տաք լինի, որ կարողանայ աւելի հանգիստ քնել։

Երբեմն երեխէն ծնվում է ուշաթափ եղած ու սեղմած, դորանից մեռնում է եթէ երկար է տևում նրա ծնուելը, գլուխը շատ ժամանակ ծնողական ճանապարհին մնում է, ու այդ, պատճառում շատ արիւն է հոսում դէպի գլուխը, եթէ ծնուելուն օգնելիս անտեղեակ ոյժ են բանացրած, երեխէն թոյլ է և ունի սակաւ արիւն։ Ուշաթափ երեխի մարմնի, երեսի ու շրթունքների գոյնն կապտացած է լինում, մարմնի կոկորդ տեղերն թոյլ են, ձեռները ու ոտները հեշտութիւնով են ծալվում, կարծես թէ կախ ընկած լինէին, թէպէտ և բոլոր մարմինը շուտ չէ կորցնում իր տաքութիւնը. պօրսի զարկի բաբախումը թոյլ և հապճ. զրաչի են լինում, կաշին դեղնագոյն է, շրթունքները կախ ընկած։ Այդպիսի պլուս

թեան մէջ ծնելիս երեխէն երբեմն փոքր ի շատ է շարժվում է ու ձայն է հանում, բայց շուտով նրա ուշը գնում է բաւականին ժամանակ մնում է ուշաթափ և շատ անգամ մեռած են համարում նրան։ Աւ հասարակ հիշատ է ուշի բերել գօրեղ կապուած, շատ արիւն ունեցող երեխին, քան թէ թոյլ նուազ ծնուածին։ Մանկաբարձի (ատամէր), սուրբ պարտաւորութիւնն է ամեն կերպիւ աշխատել ուշքի, կեանքի բերել երեխին մանաւանդ եթէ զգալի է, փոքր ինչ արտի բարախիւնը, որը պէտք է փարձած ոչ թէ միայն ձեռով, այլ և սրտի կողմը դրած ականջով։ Ուշի բերելու կերպը մեր ժողովրդի մէջ շատ անգամ այնքան անյարմար է լինում, որ աւելի շուտ կարող են այդ հնարները սպանել երեխին, քան թէ կենդանացնել նրան, վասնզոյ հարկաւոր է իմանալ ուզիզ հնարները ուշաթափ երեխին կեանքի բերելու համար։

Այս ամենը անելուց յետոյ երեխին դնում են բարձի վրայ մնասով խնամակում լոթը, որ երբեմն հաւաքուած է լինում բերանումը ու փչում են, փոքր միջոց տալով, երեխի վրա, բերանով փչում են սառը ջուր կուրծքի վրա, իսկում են ձեռով նստատեղին, գրանից յետոյ երեխէն երբեմն մի քանի անգամ խորը շունչ քաշելով ձայն է հանում կամ թէ հանգարտ ու կարգաւ, շունչը հետզհետէ պակասում է ու յետոյ բոլորովին վերջանում է։

Շնչառութիւնը գադարելիս շատ անգամ երեխին կեանքի են բերում տաք շոր քսելով մարմնին, սառը ջուր փչելով կուրծքին երեխի, շարժելով ու տաք վանդի մէջ դնելով։

Եթէ այդ ամենը չէ օգնում, մարմնին քսում են կոտրած տոխ, երեխին դնում են տաք ջրում ու հանելիս խիստ կոխում են սառը ջուրը, ձեռով խփում են նստատեղին ու խարդաղներ են կազնում սրտի գրալի տակը։

Վերևն ասացինք, որ երեխէն իր մոր որովայնումը շրջապատած է ջրային հիւթով ու շունչ չէ առնում։ Ծնուելուց յետոյ նրա գլխաւոր հարկաւորութիւնը շնչառութիւնն է, որովհետև դրանով միայն կարող է տարածուել օդը նրա թոքերում, դրանով միայն կարող են թոքերը չափաւոր լայնանալ։ Եթէ շնչառութիւնը չի լինում բաւականին խոր, թոքերի մեկ մասը կարող է մնալ այն դրութեան մէջ, ուր եղել է ծնուելուց առաջ։ Յետոյ դժուար, նա և անկարելի է նրա լայնանալն և այդ կարող է լինել պատճառ այնպիսի հիւանդութիւնների, որոց բժշկելուն հնար չկայ։ Ուրեմն պէտք է զգոյշ լինել և նկատել, թէ արդեօք լայնանում է

կարգ. ը բաւական ու շանցն ապա է լինում. Այդ դարմանին կարելի է հանել ծնողական սենեակում օդը մաքուր պահելով։ Սենեակը չը պետք է լինի ոչ գաղտ. աչ շատ ապր։ Սենեակն ապր պահելով. հնացած թողը, կեղտոտ շորերը ու շուտ շուտ նոր բերելով օդը. մենք կը հեռացնենք երեխայից շատ տիս անգամ թիւներ բացի դրանից ոչինչ ազնաւ չէ ապակուում սենեակի օդն, ուր գտնվում են մեծերը և երեխան. ինչ քան շատ մարդկերանց ներկայ թիւնը, որ մեր հասարակ մարդկանի մէջ սովորական թիւն է։

Երբ օդը, մաքուր չէ, շատ անգամ ներսակոր թունաւոր թիւն ունի նուազ աչքերի վրա, աչքերը կարմրում, ուռչում, մարդկանում են ու երբեմն դրանից երեխեն կուրանում է։ Այդ հիւանդութիւնն գրանցը լինում է ապականած օդը, թողած սենեակը, խոնաւ բնակարանը, կեղտոտ տեղով աչքերի անդրը. լուանալն և սրբելը սրանց համար հանգամանքներ. այդպիսի տեղ անգամ թիւնը կարելի է հեռացնել միայն մաքուր պահելով աչքերը. պետք է ջրով գրուշ թիւնով խառնել կեղտից. չը քսել պինդ ոչ մատները, ոչ տանը, զգաստ չը բաց անել աչքերը, երբ ձգտաստուած են, այլ սիրեն դոլ ջրով կակղացնել կպած թերթիկները. առհասարակ հարկաւոր է ամեն լուանալ աչքերը ու չդիպցնել. որ ժահրը մեզ թերթիկների տակը։

Կրեխեն ծնուելուց առաջ եղել է հաւասար ապր եղանակում. իսկ ծնուելուց յետոյ նա մնում է փոփոխական եղանակի մէջ. ուրեմն պետք է աշխատել. որ այդ փոփոխութիւնը չունենայ նրա վրա զգալի նեղութիւն։ Սենեակը, ուր պահում են երեխին, պետք է գեղեցիկ ու ցերեկ ունենայ 17 կամ 18 աստիճան տաքութիւն, քանի չը պետք է լինի նրա մէջ. օրը եղանակին ծանրաձգում հարկաւոր է երեխին դուրս տանել միւս ապր սենեակը ու յետ բերել. երբ սենեակը կրկին տաքացել է։

Բժշկապետ Աբրամ Ինոնցի Յովհաննիսեան

ԲՈՐԱԿԱՅԻՆ (ՑՏԻԳԻՆ)։

(Вѣстникъ краснаго креста 1881 г. № 25).

Ժամանակակից բժշկականութիւնն նպատակն է, ոչ միայն հիւանդութիւնն առաջն առնել, այլ և որքան կարելի է նրանց շուտով հեռացնել ցաւերի է. որ երբեմն ամեն

նա անհնար հիւանդութիւնն ամբողջ շաբաթներով մարդկանց յետ է գցում բան ու գործից այն ինչ նա կարող էր մի քանի օրում առողջանալ, եթէ իւր ժամանակին գործ ածէին հարկաւոր միջոցները։ Սրանից յետոյ հիւանդը մեծ մասամբ զանազան մի օր պարիւում է անկողնում, հետևեալ օրը դուրս չի գալիս սենեակից, բայց եթէ անհարութեամբ վիրաբերվինք, այդ հիւանդութիւնը կարող է ամբողջ ամիսներ քաշել, ուստեղծ առողջութեան քայքայման վրա կաւելանան նոր ու վատ հետևանքներ։ Նախազգուշութեան առանձին միջոցներ, մանաւանդ անհրաժեշտ են մարդին մահ սպառնացող հիւանդութիւնների ժամանակ։

Ամենամանրաւոր ու կարարարեր հիւանդութիւններից մէկնէլ բարակացաւն է։ Նա ամեն տարի երկրագնդիս բոլոր մասերում մահացնում է մարդկանց այնպիսի մի մեծ քանակութիւն, որ իր, թէ՝ զանազան, բայց անընդհատ տեսակներով, դերազանցում է մարդկային տեսի բոլոր միւս պատիժներից, ժանտախտից, խոլերայից, սովից, պատերազմից և այլն, նկատելով, որ նա պատահում է ամենատարածեալ հիւանդութիւնների։

Բարակացաւի վիրաբերութեամբ հասարակապէս յայտնի է, որ նա մեծ մասամբ ժառանգական է և աւելի յաճախ հօրից է անցնում որդուն և թոռներին, քան թէ մօրից։ Այս հիւանդութիւնը չէ յայտնվում մի տարիքին տուր, աչքի ընկնող նշաններով մարմնի վրա, երբեմն դա արտայայտվում է թոյլ մարմնակազմութիւնից, թառամած միրանների, նեղ կրծքից, տաքսի գիւրազգացութիւնից։ Բայց բարակացաւի աճելու հետ տարբեր նշանները հետևեալ երևոյթներն են. հիւանդը շնչում է հաղիւ և ուչ խոր (երեսահանց), ստանջվում է շնչարգելութեամբ ամենաանշան շարժմունքների ժամանակ, դրանցից չի հեռանում հազը, որի հետ շատ անգամ վառում է արիւն թքելը։ Հիւանդն օր օրի վատնիանում է, որին զլիաւորապէս նպաստում է և որովայնային ծուխերը և մշտական ուշադրն թացուցիչը և քրտինքն ու վերջապէս բարակացաւի անբաժան ուղեկից տարբերութիւնը, որ շատ անգամ այնպիսի տատանութեամբ է երևում, որ կարելի է տեսնել կարգն դատարկել։

Որովհետև բարակացաւն է թոքերի բորբոքաւած, արեան թթուանալու արգելող դրութիւնը։ Ուրեմն հեշտ է հասկանալ այդ հիւանդութեան էութիւնը։ Թոքերի բորբոքման ժամանակ նա ազում է նրանց շնչառութեան մակերեսոյթը, թոքարշավիկների պատերով նեղշնչուող օդն ընդ-

դիմութեան է հանգիպում։ Այս պատճառով թոքերի մէջ օդափոխութիւնը թերի է կատարվում և պատճառ է դառնում որ միջին գարիւրակական արեան, այլ և ամբողջ արեան ընդհանուր քանակի թիւնը։ Արան հոսելու մարմինը նիհարանում է։ Նաև այն ժամանակ, երբ բոլորովին բաւական կերպով ընդունած կերակուրը մարսվում է ստամոքսի ապիքների մէջ։ Այսպէս կերակուրը մնում է անօգուտ։ Թոքերում դրաւեան հետևանքում է թոքաժին ասոյթի փակվը, որի պատճառով օրիւնը ապականվում է, իսկ արեան վերաբերութիւնը պատճառում է ջերմ։

Բարակացուի պատճառ կարող է լինել օգը, որ յանկարծակի փոփոխութիւններով, ուր՝ կարող են մեր մարմնից արտագրել առաջ թիւն և ջուր։ Ով որ արտաքսուած չէ բարակացուի, նա միանգամայն կարող է ստանալ շնչափող գաւեր, բայց արտաքսութիւն ունեցող մարդը շատ հեշտ կարող է բարակացու ստանալ։ Բարակացուին արտաքսուած կազմուածքն առաջ է գալիս այն երկարատև խանութիւնից։ Փոփոխութիւնն ապացուցց. որ այն երկրները, որտեղ յաճախ բարակացու է պատահում։ Նրանց օդը շատ խանու է, իսկ չոր երկրներում այդ ցաւը սակաւ է պատահում։

Գեանի նամութիւնը, որից և կախուած է օդի խոնաւութիւնը միշտ և ամեն տեղ։ Ծառայել է ինչպէս թոքախոսութեան դիմաւոր պատճառ տեղացիների համար, թէև այդպիսի տեղերը կարելի է անվտանգ դարձնել (թոքախտաւ թեան վերաբերու թեամբ) շարացնելու միջոցով (դրենաժ)։

Բարակացուի զարգացման համար ոչ պակաս բարենպաստ պայմաններ են ներկայացնում փառոց նիւթերը, որոնք ծծելու և արեան մէջ թափանցելու պատճառով ոչ թէ միայն կարող են թոքերի բոլորումն առաջ բերել, այլև թիւնաւորել ամբողջ մարմնը։ Այսպիսի նիւթերին պատկանում են ամեն տեսակ ճենապակու նիւթերի զազերը, գիրիէրիսով հիւանդից բաժանուած մանրէները շնչափողի ու կոկորդի փտոզական բորբոքման և բարակացուով վերջն տարածանի հիւանդացած թոքերի մանրէները և այլն։ Օդի հետ խառնուած, փոշիացած նիւթերը նոյնպէս օգնում են թոքի բորբոքմանը։ Ուրիշ է, որ առաջ, ամեն մարմինը կարող է յոգնել փոշու։ Ներշնչումից առաջացած ծանր հիւանդութիւններին, բայց միայն այն ժամանակ, երբ որ պատճառը բարդվին հեռացած է։ Հակառակ դէպքում հիւանդութիւնը անդադար կը տարածուի ու կը յառաջացնի բարակացու։ Հասկանալի է հարկաւոր է ասել, թէ որքան շատ է գործածում բարակացուը որ-

